ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<16>> փետրվարի 2022թ. N ՄՈ/109-2022

ք. Արմավիր

«ԱԼԱՇԿԵՐՏԻ Հ. ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱԼԻՆԱ ՆԱՋԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Ալինա Նաջարյանի 2022 թվականի փետրվարի 14-ի դիմումը.

որոշում եմ

1. «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալինա Նաջարյանին տրամադրել 2021 թվականի չօգտագործած ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2022 թվականի փետրվարի 17-ից մարտի 10-ը ներառյալ՝ 15 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Ալինա Նաջարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Նաիրա Բաղդասարյանին:
3. Ալինա Նաջարյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի մարտի 11-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Էլեկտրոնային թվային ստորագրություն չունի Էդ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 16.02.2022 11:12:25 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505